բի վրայ նայում է այն աչքով, ինչ աչքով նայում է ծառան իր տիրոջ վրայ, որ եթէ հաց չտայ եւ նրան չվարձատրէ, ծառան կդադարէ ծառայելուց, եւ գուցէ կը թշնամանայ նրա հետ:

Բայց որքան էլ հաճելի լինէր ինձ ծերունի տանուտիրոջ հիւրասիրութիւնը, ես դարձեալ շտապում էի շուտով ճանապարհ ընկնել: Որովհետեւ մտածում էի, եթէ ուշանամ, գուցէ Ասլանը դարձեալ չի սպասի ինձ: Ես նրան վերջին օրերում լաւ էի ճանաչել. նրա համար ընկեր, բարեկամ ոչինչ նշանակութիւն չունէին. նա իր «գործին» էր նայում: Եւ շատ կարելի էր, նա ինձ բոլորովին մոռացել էր, որպէս մոռացել էր Սօնային, որին մի ժամանակ այնքան տաք կերպով սիրում էր նա: «Այսպիսի մասնաւոր սէրը, ասաց նա, ոչինչ նշանակութիւն չունի այն մեծ սիրոյ մօտ, որով լցուած է այժմ իմ սիրտը»...

Հովիւների վրանները կազմուած էին մի նեղ հովիտի մէջ. նրանք թոով մի քանի հարիւր կը լինէին. իւրաքանչիւր վրանը պատկանում էր մի ընտանիքի. բայց բոլորը մի գիւղի ժողովուրդ չէին, այլ մի քանի գիւղերի բնակիչները հաւաքուած էին միասին: Բայց դարձեալ նրանք խառնուած չէին, եւ ամէն մի գիւղի խաշնարածներն իրանց առանձին տեղն ունէին, նրանց վրաններն առանձին խումբեր էին կազմում: Բայց այս ժողովուրդը բոլորովին չէր նոիրուած խաշնարածութեան, նրանք ունէին եւ իրանց երկրագործութիւնը: Ամէն ընտանիքի մի մասը մնացել էր գիւղերում ցանքերը մշակելու համար. մանաւանդ ցանքերի մեծ մասը չորային էր, որ աւելի խնամոց կարօտութիւն չունի. վարում են սարերի հարթահաւասար կողքերը եւ ցանում են, այնուհետեւ ոռոգումը թողնում են բնութեան հոգատարութեանը:

Տղամարդիկ միայն հոգս էին տանում հօտերի պահպանութեան եւ դարմանելու մասին. տնտեսական հոգսերը կանանց վրայ էր: Ոչ մի կին, ոչ մի աղջիկ անգործ չէր այս աշխատասէր հասարակութեան մէջ. կանայք էին կաթը կթում, իւղ պատրաստում եւ պանիր մակարդում. կանայք էին ոչխարները մազակտուր անում, բուրդը մանում եւ նրանից կապերտներ, գորգեր եւ զանազան օթոցներ պատրաստում: Այս կանանց արդիւնքն է այն նուրբ շալեղէն գործուածները, որոնցմով պարծենում է Վանը, որոնք ծառայում են հարուստ իշխանների համար վերարկու եւ այլ հագուստներ լինելու: Նրանք ծանօթ են բոլոր բոյսերի, արմատների եւ հանքերի հետ, որոնք տալիս են զանազան ներկեր, եւ իրանք են պատրաստում այն գեղեցիկ գոյները, որոնցմով նշանաւոր են Վանայ շալեղէն գործուածները: Այս բոլորից երեւում է, որ այս ժողովուրդը շատ հին ժամանակներում դուրս է եկել իր վայրենութիւնից, եւ արհեստը ու աշխատութիւնը խիստ վաղուց ծանօթ է եղել նրան: